ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/56

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Բողոք բերող՝ «Գդակ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Գդակ» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Երանոսյանի, ներկայացուցիչ՝ Ա. Համբարձումյանի

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ՝ Ա. Ասատրյանի, Վ. Սահակյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով բաց մրցույթ, բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գդակ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 31.07.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել կամ անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի կողմից ընկերության կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված չափաբաժինների մասով «Գդակ» ՍՊԸ-ի հայտը մերժելու, այդ չափաբաժինների մասով այլ մասնակիցների հաղթող ճանաչելու և հանձնաժողովի կողմից հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 31.07.2019թ.-ին:

02.08.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 09.08.2019թ.-ին և 16.08.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 16.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.08.2019թ.-ին:

2. «Գդակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գդակ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով բաց ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

«Գդակ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել և մասնակցել է նշված ընթացակարգին: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ. ժամը 11:45-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 4.1 կետի համաձայն 17 հատ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Գդակ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը որոշել է ծանուցել բոլոր առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին և վերջիններիս առաջարկել ներկայացնել ԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները իր համապատասխանությունը փաստաթղթերը:

«Գդակ» ՍՊԸ-ն ծանուցման մեջ նշված ժամկետում, 12.07.2019թ. սահմանված ժամկետում և կարգով gdak@mail.ru էլ. փոստի հասցեից a.sahakyan@mil.am էլ. փոստի հասցեին է ուղարկել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը: Նշված փաստաթղթերը հաստատվել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ 12.07.2019թ. փաստաթղթերը ուղարկելու օրվա դրությամբ: Նշվածի վերաբերյալ կցվում է և ներկայացվում է gdak@mail.ru էլ. փոստի հասցեից a.sahakyan@mil.am էլ. փոստի հասցեին ուղարկված կարճապատկերումը (screenshot):

Դրանից հետո «Գդակ» ՍՊԸ-ն համոզված լինելով, որ կատարել է իր պարտականությունները, ստանում է ՀՀ ՊՆ-ի կողմից արձանագրություն, մասնավորապես 17.07.2019թ. N 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գդակ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը, ինչով պայմանավորված որոշել է մերժել վերջինիս հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև Օրենք/

2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը,

34-րդ հողկածի 1-իև մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են,

34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), 34-րդ հոդվածի 6-րդ մասին համաձայն հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փուստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատես/ած փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընկերությունը գտնում է, որ «Գդակ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը ուղարկվել է Պատվիրատուին: Սակայն էլեկտրոնային նամակը սխալմամբ v.sahakyan@mil.am էլ հասցեի փոխարեն ուղարկել է a.sahakyan@mil.am էլ հասցեին, այսինք նամակը ուղարկվել է նույն պատվիտատու ՀՀ ՊՆ գնումների վարչության մյուս ստորաբաժանման գնումների մեկ այլ համակարգողի էլ հասցեին: Փաստորեն մեր կողմից ուղարկվել է անհրաժեշտ փաստաթղթերը պատվիրատուի գնումների համակարգողին: Նշենք նաև որ «Գդակ» ՍՊԸ-ն առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել 17 հատ չափաբաժնի մասով էժան գին ներկայացնելու հիմքով, ու այս դեպքում մեզ մերժելով ՀՀ պետական բյուջեն կարող է կրել վնասներ: Նշենք նաև որ այս դեպքում անտրամաբանական է որ հատուկ սխալ ուղարկել էլ հասցեն քանի որ այդքան մեծ չափաբաժիններով մասնակիցը չէր կարող հատուկ հրաժարվեր հետագա մասնակցությունից:

Ձեզ եմ ներկայացնում gdak@mail.ru էլ հասցեի արտատպումը, վճարման փաստաթուղթը և տնօրենի անձնագրի օրինակները:»:

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել կամ անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի կողմից ընկերության կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված

չափաբաժինների մասով «Գդակ» ՍՊԸ-ի հայտը մերժելու, այդ չափաբաժինների մասով այլ մասնակիցների հաղթող ճանաչելու և հանձնաժողովի կողմից հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.08.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Գդակ» ՍՊԸ-ի կողմից 31.07.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն թիվ Մ-35410-2019 06.08.2019թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 02.08.2019թ. №ԲՔԱ-ԼՕ/2/12944-2019 գրության՝ հայտնում եմ, որ 17.05.2019թ. ՀՀ ՊՆ կարիքների համար հայտարարվել է բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռք բերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 28.06.2019թ., ժամը 11:45-ն: Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն: «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի գնահատման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինս ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և arpems համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ 11.07.2019թ. վերջինիս առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, ընդ որում ծանուցման մեջ հստակ նշած, է որ փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել v.sahakyan@mil.am էլ. փոստին ուղարկելու միջոցով: Սակայն, քանի որ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես փաստաթուղթ չի ներկայացվել՝ գնահատող հանձնաժողովը մերժել է վերջինիս հայտը:

Բողոքաբեր ընկերությունը գտնում է, որ պահանջվող փաստաթղթերը a.sahakyan@mil.am էլ. փոստին ուղարկելով կատարել է իր պարտականությունը, սակայն պարզ չէ թե գնահատող հանձնաժողովը կամ գնումները համակարգողը ինչից պետք է ենթադրեին, որ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն փաստաթղթերը v.sahakyan@mil.am էլ. փոստին ուղարկելու փոխարեն ուղարկել է a.sahakyan@mil.am էլ. փոստին: Արդյոք Բողոքաբեր ընկերությունը պատկերացնում է, եթե այսուհետ բոլոր 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները պահանջվող փաստաթղթերն ուղարկեն այլ համակարգողների, ինչ խառնաշփոթ և քաոսային իրավիճակ

կարող է առաջանալ, քանի որ հնարավոր են դեպքեր, որ «սխալ հասցեատեր» համակարգողը լինի արձակուրդում, գործուղման մեջ և այլն:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.14 ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սույն հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է սույն կետում նշված փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ սույն հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Այսպիսով, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և arpems համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ վերջինիս 11.07.2019թ. առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված փաստթղթերը, ընդ որում ծանուցման մեջ հստակ նշած, է որ փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել v.sahakyan@mil.am էլ. փոստին ուղարկելու միջոցով: Սակայն «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն նշում է, որ 12.07.2019թ. սխալմամբ փաստաթղթերն ուղարկել է a.sahakyan@mil.am էլ. փոստին և համարել է, որ իր պարտականությունները կատարված են: Սակայն ինչպես արդեն նշվել է Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.14 ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սույն հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է սույն կետում նշված փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ սույն հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով: «ԳԴԱԿ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանում էր 16.07.2019թ. ներառյալ, այսինքն վերջինս բավականաչափ ժամանակ ուներ ճշտելու թե ինչու քարտուղարը Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.14 ենակետ նախատեսված պարտականությունը չի կատարում և ինչու չի հաստատում դրանց ստանալու հանգամանքը, իսկ քարտուղարը փաստաթղթերի ստացման հանգամանքը չի հաստատել այն պարզ պատճառով, որ «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն ընդհանրապես փաստաթուղթ չի ներկայացրել (ուղարկել): Ավելին, նույն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած «ՀՍՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն

ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և այս անգամ արդեն պահանջվող փաստաթղթերն ուղարկել է v.sahakyan@mil.am էլ. փոստին, որից հետո քարտուղարի կողմից «ԳԴԱԿ» ՍՊԸ-ին ուղարկվել է հավաստում փաստաթղթերը ստանալու վերաբերյալ:

Բողոքաբեր ընկերությունը բողոքի մեջ հղումներ է կատարում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, սակայն չի նշում թե իր կողմից վկայակոչված իրավական ակտերում նշված, որ պահանջն է խախտել պատվիրատուն, գնահատող հանձնաժողովը կամ գնումներ համակարգողը, ավելին, վերջինս չի էլ թաքցնում, որ սխալը եղել է իր կողմից՝ v.sahakyan@mil.am էլ. փոստի փոխարեն փաստաթղթերն ուղարկել է a.sahakyan@mil.am էլ. փոստին: Բողոքաբեր ընկերությունը հղում է անում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասին՝ համաձայն, որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են (և հրավերով և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ուղարկված ծանուցմամբ նշված է, որ փաստաթղթերը ներկայացվում են v.sahakyan@mil.am էլ. փոստին ուղարկելու միջոցով):

Միաժամանակ, հարկ եմ համարում նշել, որ 17.05.2019թ.ՀՀ ՊՆ կարիքների համար հայտարարվել է բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռք բերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/4» ծածկագրով ևս մեկ ընթացակարգ, որը բաղկացած է թվով 17 չափաբաժիններից, և, որոնց նախահաշվային գները գերազանցում են գնումների բազային միավորի հնգապատիկը: Նշված ընթացակարգի արդյունքում բողոքաբեր ընկերությունը թվով 7 չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո «ԳԴԱԿ» ՍՊԸ-ին առաջարկվելու է կնքել 98 424 000 (իննսունութ միլիոն չորս հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամի՝ բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի մատակարարման պայմանագիր: Ավելին, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած «ՀՍՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով «ԳԴԱԿ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և այս դեպքում նույնպես անգործության ժամկետի ավարտից հետո «ԳԴԱԿ» ՍՊԸ-ին առաջարկվելու է կնքել պայմանագիր: Վերը նշվածը վկայում է այն մասին, որ ոչ պատվիրատուն, ոչ գնահատող հանձնաժողովը և ոչ էլ գնումներ համակարգողը չունեն կանխակալ մոտեցում բողոքաբեր ընկերության նկատմամբ, այլ գործել են գնումների մասին ՀՀ օրենսդրության շրջանակներում:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/56 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

17.05.2019թ. ՀՀ ՊՆ կարիքների համար հայտարարվել է բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 28.06.2019թ., ժամը 11:45-ն:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել ի թիվս այլ մասնակիցների նաև «Գդակ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ.-ի թիվ 5-րդ արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընկերությունը 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 15-րդ, 19-րդ, 21-րդ, 25-րդ, 26-րդ, 30-րդ, 36-րդ, 39-րդ, 44-րդ, 51-րդ, 56-րդ և 58-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և arpems.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ 11.07.2019թ.-ին վերջինիս առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Ծանուցման մեջ հստակ նշվել է, որ փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի v.sahakyan@mil.am էլ. փոստին ուղարկելու միջոցով:

«Գդակ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը v.sahakyan@mil.am էլ. փոստի հասցեի փոխարեն ուղարկվել է a.sahakyan@mil.am էլ. փոստի հասցեին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2019թ.-ի թիվ 6-րդ արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ հաշվի առնելով, որ «Գդակ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես փաստաթուղթ չի ներկայացվել՝ գնահատող հանձնաժողովը մերժել է վերջինիս հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Գդակ» ՍՊԸ-ի

կողմից 31.07.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.14 ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սույն հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող

փաստաթղթերը հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է սույն կետում նշված փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ սույն հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

17.05.2019թ. ՀՀ ՊՆ կարիքների համար հայտարարված բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Գդակ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ.-ի թիվ 5-րդ արձանագրությամբ կայացված որոշմամբ 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 15-րդ, 19-րդ, 21-րդ, 25-րդ, 26-րդ, 30-րդ, 36-րդ, 39-րդ, 44-րդ, 51-րդ, 56-րդ և 58-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Arpems.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ 11.07.2019թ.-ին վերջինիս առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը: Ընդ որում, ծանուցման մեջ հստակ նշվել է, որ փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել v.sahakyan@mil.am էլ. փոստին ուղարկելու միջոցով:

Սակայն «Գդակ» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը v.sahakyan@mil.am էլ. փոստի հասցեի փոխարեն ուղարկվել է a.sahakyan@mil.am էլ. փոստ հասցեին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2019թ.-ի թիվ 6-րդ արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ հաշվի առնելով, որ «Գդակ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես փաստաթուղթ չի ներկայացվել՝ գնահատող հանձնաժողովը մերժել է վերջինիս հայտը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում «Գդակ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և arpems.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ վերջինիս 11.07.2019թ. առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված փաստթղթերը, ընդ որում ծանուցման մեջ հստակ նշված, է որ փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել գնահատող հանձնաժողովի

քարտուղարի՝ v.sahakyan@mil.am էլ. փոստին ուղարկելու միջոցով: Սակայն «Գդակ» ՍՊԸ-ն 12.07.2019թ.-ին փաստաթղթերն գնահատող հանձնաժողովի քարտուղարի v.sahakyan@mil.am էլ. փոստին ուղարկելու փոխարեն ուղարկել է a.sahakyan@mil.am էլ. փոստին, այն դեպքում, երբ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.14 ենթակետի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը նույն հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի՝ նույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին:

Ընդ որում «Գդակ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանում էր 16.07.2019թ.-ին ներառյալ, այսինքն վերջինս բավականաչափ ժամանակ ուներ ճշտելու, թե ինչու՞ քարտուղարը Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.14 ենթակետով նախատեսված պարտականությունը չի կատարում, և ինչու՞ չի հաստատում դրանց ստանալու հանգամանքը:

Ավելին, գործում առկա նյութերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ նույն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/6» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած «ՀՍՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով «Գդակ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և այս անգամ արդեն պահանջվող փաստաթղթերն ուղարկել է v.sahakyan@mil.am էլ. փոստին, որից հետո քարտուղարի կողմից Ընկերությանն ուղարկվել է հավաստում փաստաթղթերը ստանալու վերաբերյալ:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ գործում առկա փաստերի ուսումնասիրության արդյունքում հերքվում է Ընկերության տնօրենի այն պնդումը, որ Ընկերության կողմից v.sahakyan@mil.am էլ. փոստի հասցեին նախկինում երբեք նամակ չի ուղարկվել: Պատվիրատուի կողմից ներկայացված, գործում առկա նամակագրության արտատպման համաձայն, հստակ երևում է, որ Ընկերության կողմից v.sahakyan@mil.am էլ. փոստի հասցեին 22.02.2014թ.-ին և 09.06.2014թ.-ին ուղարկվել են նամակներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գդակ» ՍՊԸ-ի կողմից 31.07.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/56 բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**